

70. ԵՐԵՄԵԱ ԹԱԿԱՎՈՐ

Կէլնի. չէլնի մեյ խատ իրիկ, մեյ խատ կնիկ. իսոնց մեյ խատ լաճ կէլնի, մեյ խատ ախչիկ: Էսա ախչիկն էլ ըսկուն խորոտ կէլնի, տյու կասես, թե տանխինգյ օրվան լուսնակ ի:

Ավուր մեկ էսա տղեներաց մեր կմեռնի, իսոնց խեր թնզն կպսակվի: Էսա թնզա մեր խետ ուր մեյ խատ ինչլաչեբ ախչիկմ կպերի: Էսա կնիկ գյրող կուզի տեսնալ, էսա տղեներ չուզե տեսնալ, իսոր խամար կիշեր-ցերեկ ուր իրկան կհամոզի, որ ուր տղեներ տանի դաշտ՝ կուրեսցուցե, աման իրիկ կնգյնն խնբար ականջ չանե:

Ծմովա մեչ մեկ օր իրիկ կէլնի կէրթա քյաղաքյ: Կնիկն ի գարնան ցանելու սերմացու ցորեն կպերի, կխաշի, էմել կլցի ջվլներ, պերահտեր կկարի, կշարի էնտեղ: Գյարուն որ կուգյա, մարթն ի կէլնի դաշտ վեցկի կանի, ցորեն կտանի կցանի: Գյեղակնի ցանած ատտեր բիթուն կկանչնան, էսա մարթու ատտեր չեն կանչնա: Մարթն ի կուգյա տուն, կասի. - Կնիկ, բիթունի ատտեր կանչցեր ին, մեր ատտեր ըստարի մեկ ֆիլիգ պիլա չեն տվե:

Կնիկն ի, կասի. - Քյա մարթ, ասպած քյո տուն ավեր չանի, ես որ քյե կասեմ, տյու կիտես, որ ես քյո տղեներաց դյուշման եմ: Էսա պատիժ, որ էկավ վեր մե՝ քյո տղեներաց երիսանց ի, ինոնքյ ուղուրսուզ են: Էլի ինոնց տար կուրիսցու, թե չէ՝ ես կպոնեմ իմ ախչկան ծեռ, քյո տնից կէրթամ, տյու կիտես՝ ինչխ կանես, արա, էլ չասե՞ս, թե ձիկ կնիկ կա:

Մարթն ի, կտեսնա, որ էլ խետ ուր կնգյնն չի կանա գյլեխ էլնի, կասի. - Կնի՛կ, բնալի, քյանիմ խատ խաց թխի ատնեմ խետս. տանեմ սար, թողնեմ էն տեղ, գյնամ:

Կնիկն ի, որ էսա խնպար կլսի, շատ կուրախնա, համան շոտմ կէլնի քյանիմ գյունդ խմոր կշաղախի, բեոլ-բեոլ աղ կլցի մեչ, ուզածիտ պես շոռ կլոճ կթխի կուտա իրկան:

Մարթն ի, կառնի էտա կլոճներ, մեյ խատ էլ մեզնր, ուր տղեներաց կասի. - Ելե՛քյ, էսօր էրթանքյ սար պանջնր պիրեքյ:

Տղեներն են, ուրախ-ուրախ կէլնեն խետ ինոնց խոր կէրթան սար, շատ կէրթան, քիչ կէրթան, կանոթնան, խոր մոտեն խաց կուզեն: Էս էրիկ մեյ խատ շոռ կլոճ կխանի կկիսի, կես կուտա լաճուն, կես կուտա ախչկան: Տղեներն են, որ էսա շոռ կլոճ կուտեն, շատ կծարվնան կասեն. - Բնբո՛, մենքյ ծարավ ենքյ:

Խերն ի կասի. - Կտորմ էլ քյելեքյ էնա տեղ ախպյուր կա, ճյուր կխմենքյ: Վարհապլի իտոնց խապելով կտանի չուր սարի գյլոխ: Խեր. որ կխասնեն սարի գյլոխ, խերն ի ուր ծեռաց կոռ կխշտի գյետին. ուր վերվի կոռոդիկ կխանի. կթալի վեր կոռնի: Ենքյ կպառկի կոռոդկի խովի տակ. տղեյներաց կասի. - Կնացեքյ, գյեռ էնա տեղ. սարի տակ ախպյուր կա. ճյուր խմեքյ իկեքյ էրթանքյ:

Տղեյներն են կինեն ճնմբնխ. կէրթան. հնա՛ կիրիշկան իտև կասեն, կոռ կա կոռոդիկը կա, բաբոռ էլ կա: Վարհապլի կէրթնն ախպյուր կկնդնեն. ճյուր կխմեն, ամաև չուր ճյուր կկնդնեն, կխմեն, կտնտնեն, կէլնի արևմտոց:

Կուգյնն. կխասնեն ինոնց խոր պառկած տեղ. կտեսնան. որ ի՞նչ՝ կոռ կա. կոռոդիկը կա, բաբոռ չկա:

Քորն ախպերնին կնստեն էտա տեղ կուլնն, կուլնն. չուր սրև կմտնի:

Ախպերն ի, կասի. - Քյուրիկ, տյու պառկի. ես էլ պառկեմ վեր քյե:

Քորն ի. կասի. - ՉԷ՚, ախպերիկ. տյու պառկի, ես էլ պառկեմ վեր քյե, որ գյելեր գյնն, ինաև ձիկ ուտեն, նոր քյե, որ ես քյո չնրչյարանքյ չտեսնամ:

Ախպերն ի կպառկի, քյորն էլ կպառկի վեր ախպոր. էրկուսն էլ քյաղցր անուշ կքյնեն:

Աստծու խրամանքյով էտա կիշեր նա՛ գյել, նա՛ էլ ուրիշ ջնանվնր էտա տեխրանքյ չի ֆռա. ըսկուն, որ քյոր ախպերն էլ առատուն սաղ սալամաթ կէլնեն վեր:

Ախչիկն կպոնի ուր ախպոր ծեռ, կինեն ճնմբնխ: Կէրթնն, շատ կէրթնն, քիչ կէրթնն, ախպեր կանոթնա, խաց կուզի. քոռն ի կխանի ուր ծոցից կես խաց կուտա ախպոր, ախպեր որ էսա խաց կուտի, կտորմ տեղ էլ կէրթնն, կծարվնա. կասի. - Քյուրիկ, ես ծարավ եմ:

Քյորն ի կասի. - Մեկ կտոր էլ էրթանքյ վեր ճնմխուն ախպյուր կա, էնտեղ ճյուր կխմենքյ: Մեկ կտոր էլ կէրթնն, ախպեր կասի. - Ես էլ չեմ կանա քյելե, ծարվութնից իմ կնդմներ կոտրան:

Կխասնեն մեչ մեյ խատ դնշտիմ, կտիսնան, որ գյեռ անձրև իկե. աշխրիս մեչ ինչ կնանդնր որ ջնանվնր կա. էդա դաշտից ընցեր են, դնոցեր են. ըսկուն որ իսոնց ոտքերաց տեղ ընգյե փոս, ճյուր ի գյեռվե:

Ախպերն ի կասի. - Քյուրիկ, ես էլ չեմ կանա քյելե, ես պիտի էսա հնյվնաներաց ոտքերաց տեղի ճրեր խմեմ:

Քյորն ի կասի. - Ախպերի՛կ, որ առչու էնն գյելու ոտնաց տեղրանքյ խմես, կելնես գյել. առչ՝ զիկ կուտես, որ ծիյու ոտաց տեղ խմես, կէլնես ծի. չհիֆթով ձիկ կզնրկես, կթողնես կփախնես, ի՞նչ անեմ խետ քյե, պնլե էսա գյառու ոտաց տեղ խմի, որ գյնռ տանաաս, ես կանամ քյե շախե:

Ախպերն ի, կկզվի գյնռու ոտաց տեղ կխմի: Խետ որ կխմի, կէլնի մեյ խատ բնշ գյնռ, մաելեն կենի քյուրոչ իտև կէրթնն:

Քյորն ի, որ կտիսնա, թե ուր ախպեր էլնվ գյնռ, կկզվի գյետին տաստեմ խոտ չքյնշի կպոնի ծեռ. մեյ տեխեն կուլնն. մեյ տեխեն խոտ կուտա ախպոր պերան, կէրթնն:

Ախչիկն ի, քիչմ տեղ կէրթնն, մեյ դիր էլ կկզվի գյետին, որ խոտ քյնղի:

Կտիսնա, որ մեյ խատ պետ մառջնանմ գյեռ գյետին ի, կվիրուցի էտա մառջնան, կտնի ջեռը կէրթնն:

Իրիկվան տեխ կխասնի մեյ խատ քյեռշկ-սարեմ տակ կնստի, պատի իրես մեկ

տեխեն մատնով գյեսին կպճկորի. մեյ տեխեն կուլն. ուր աոցնքներն էլ կլցվեն մեչ էտա փոսին:

Սորա ուր ջեոբից կխանի էտա մաոջանն. կտնի մեչ էտա փոսին, խող կուտա վերեն. կտանոնն կէլնի էդա ջյեոշկ-սարից քիչմ խաց կուզի. կեսն ինքյ կուտի. կեսն կուտա ուր Գյանոնիկ ախպոր պերան:

Իրիկուն, որ կմթնի, ախչիկն ի կէլնի ուր Գյանոնիկ ախպեր կաոնի, կէրթա մեյ խատ ծառիմ տակ կծկվի: Ծեռ կթանլի ուր ախպոր վիզ. կգյրկի կքյնի:

Առատուն ի ախչիկ կէլնի վեր, կաոնի ուր ախպեր, կէրթա էլմել էն ջյեոշկ-սարի տակ, կտիսնա. որ ի՛նչ՝ էրեկվան ուր մաոջան խորած տեղ գյեռ մեյ խատ ծառ մի պյուսե. էլե խետ թակավորի ջյեոշկ-սարի բոյին, կանաչ կնզլներաց խետն էլ ճութ-ճութ կարմիր մաոջսան ի կախվե. ըսկուն, որ մարթու. աստծու տյուր կուգյան:

Ախչիկն ի. կէրթա կկայնի էդա ծառի տակ. քիչմ կուլն, կդանոնա. կխաոցուցի. - Մաոջա՛ն, ջյե վո՞վ ի տնգյե:

Ծառն ի կասի. - Քյո շող-շող մատներ:

- Մաոջա՛ն, ջյե վո՞վ ի ճրե:

Ծառն ի կասի. - Քյո լյուլախ աչքեր:

Ծառն ի էսա ասելուց սորա մեյ խատ իրար կտիպնի, կուզլներ կթանփի տակ:

Խետ որ ծառ իրար կտիպնի, կազլներ կթանփի, Գյանոնիկ ախպեր շոտմ կէլնի վեր կնզլներաց կբանշլայի ուտել:

Ախչիկ. որ խետ ծառին խանբանր կուտա, էդա կտոր գյանխ թագավորու լաճ կէլնի փենջանրեն, որ կտիսնա էսա ախչկան խորուտկութեն. իսոր խետ ծառին խանբանր տալ, պերան կմնա պանց. ուր աչքեր կճմոթի, ուր տեսածին չավատուս:

Ախչիկն ի, էնօր չուր իրիկուն էտա տեղեր կֆռա, իրիկուն գյանն կէրթա ուր ծառի տակ, ուր Գյանոնիկ ախպոր վիզ կգյրկի. զինքյ թանլիմ կանի աստծուն. կքյնի:

Էն մեկէլ օր առատուն կէլնի վեր. գյնա կէրթա ծառի տակ կնստի կուլա. կասի. - Մաոջա՛ն, ջյե վո՞վ ի տնգյե:

Ծառ կասի. - Քյո շող-շող մատներ:

- Մաոջա՛ն. ջյե վո՞վ ի ճրե:

Ծառն ի կասի. - Քյո լյուլանխ աչքեր:

Ծառն ի, էսա ասելուն պես մեյ խատ իրար կդեպնի, կանաչ կնզլներ կթանփի: Համան էդա Գյանոնիկ ախպեր շուշոտ-շուշոտ կբանշլայի էդա կնզլներ ուտել:

Թակավորու լաճ մեկէլ օր էսա պանն կտիսնա. կէրթա ուր խոր կասի.

- Թակավոր ապրած կենաս, որ տյու կուզես զիկ պսակել՝ մեր ջյեոշկ-սարի տակ մեյ խատ խաց ժողվող ախչիկ կա, էն ախչիկ պետի պսակիս վեր զիկ:

Թակավորն ի, որ լաճու էսա խանբանր կլսի, կասի. - Ա՛յ տղա, ես մեկ թակավորմ եմ, իմ նամուսին կկպնի՞, որ ես էրթամ խաց ժողվող ախչիկ պիրեմ, անեմ զիկ խարս, մեչ աշխարին ախչիկ չկա՞, խազար-խազար թակավորու ախչկներ կան. որն որ կուզես՝ պիրեմ ջյե խամար:

Լաճն ի կասի. - Թակավոր ապրած կենաս, որ էն խաց ժողվող ախչիկ ուզես զիկ, կպսակվեմ. որ չուզես՝ ես էլ մեչ աշխարին չեմ պսակվե:

Թակավորն ի, որ կտիսնա թե խետ լաճուն ճար չէլնե, կասի. - Բալա՛մ. ջյո մուր ջյո ճակատ, ես չեմ խառվե, տյու կիտես, ինչխ կանես արա:

Թակավորու լաճն ի, համան կէլնի տյուս, էսա ախչկան ծեռ կպոնի, կտանի ներս. թանլիմ կանի խալայեն ներաց, կասի. - Տարե՛ք. լողկցուցեք, ծեռքյմ թակավորավայել խալավ խագյուցեք պիրեք, որ ես պսակվեմ:

Խալայեղներն են էսա ախչկան շոտմ կտանեն պնաղնիս. կլողկցուցեն. որ մեկ ծեռք էլ խալավ կխագյուցեն, կէլնի ըսկուն խուռնի խրեղեն ախչիկմ. որ չուտեր. չիմեր էսա ախչկան խորոտկութեն թամաշա աներ:

Թակավորու տղեն ի, որ կուգյն էսա ախչկան կտիսնա. ուրախութենից խելքյ կէրթա, համան շոտմ ամր կանի յոթն օր. յոթ կիշեր, կպսակվի:

Էսա ախչիկն ի, որ կէլնի թակավորուն խարս, ուր Գյառնիկ ախպորն էլ կտանի ուր խետ. ուր ազիզ լյուսյու պես կպախի, ըսկուն, որ մեյ քյնելու գյախ կգնտաներ մոտեն:

Թակավորու լաճն էլ ուր կնգյան սիրուն էսա գյառուն էլ շատ կուզի:

Ավուր մեկ էսա ախչկան մեր կլսի, որ ուր խորթ ախչիկ կնստցե. իլե թակավորուն խարս, աֆքյարից զինքյ ուր կուտի: Կէլնի ուր արաբու պոկոշ ախչիկ կաոնի, կուգյա էսա թակավորու քյաղաքյ. ուր ախչիկ կուտա շադու պառվում տուն պախ, ինքյ կուգյա կմտնի թակավորու քյեռշկ-սարեն, կասի. - Էսա թակավորու խարս որ կա՝ իմ ախչիկն ի. ես իկեր իմ, որ մե խատ իմ ախչիկ տիսնամ:

Խալայեղներն ին խնբար կտանին թակավորու խարսին, կասեն, թե քյո մերն էկավ:

Ախչիկն ի, որ էսա խաբար կլսի, համան կէլնի կվազի դյուս, խետ որ ուր մեր կտիսնա. ուրախ-ուրախ զինքյ կթփի ուր մոր գյիրկ. կփաթթվի վիզ:

Մերն ի, ինչ կանդնար, որ սոտանց սատանի իրես տիսնալ կուզեր. էսա ախչկան իրես տիսնալ չէր ուզե, ամաև ուր սրտ չիմցուցելու խամար կուրախնա. ախչկան իրեսներ կպաքյի. կասի. - Ոտքյերացդ մեռնիմ. ծաքի՛կ, ծեռքյերացդ մեռնիմ. ծնքյի՛կ. տյա տո՞ր էր կնանցե, վեր զիկ կուրիսե:

Վարհապի մեյտեղ կէրթնն թակավորու սարեն:

Իրեքյ օրից սորա մերն ի թակավորի լաճուն կասի. - Էսօր զիկ իզին տվեքյ ես իմ ախչիկ մեյ խատ առնեմ էրթամ ծով, իմ ուզածով լողկցուցեմ:

Թակավորու լաճն ի, կասի. - Տյու կիտես, կտանիս ծով՝ տար:

Մերն ի, կաոնի ուր ախչիկ կտանի ծով, ուր խալալ ախչիկն էլ կտանի խետ ուր, խետ որ թակավորու խարս ուր խալվներ կխանի կմտնի ծով, մերն ի, կմլշկի կէրթն մեչ ծովուն, կտնոնա իսոր խալվներ կխագյուցի ուր ախչկան, թե որ թակավորու խարս տղով էր, իդոր խամար մեյ խատ էլ մազրակա կկապի վեր ուր ախչկան փորին, քյողք կթալի վեր գյլխուն, կթամխի կասի. - Ախչի՛կ, որ կէրթաս սարեն քյանիմ օրից սորա ասա խիվանդ եմ, թակավորու լաճն ի ինչ ճար որ կանի, տյու էն տեղեր մէլնե, մեյ քիչ էլ չոր խաց լից քյո ղեռշկի տակ. խետ որ թակավորու լաճ կմտնի քյո էօդեն, տյու շոճվի վեր էն կողին, շոճվի վեր էն մեկէլ կողին, էտա խացեր կկոտոտվին, թակավորու լաճ կասի. - Ախչի՛կ, ի՞նչ էլեր ի, - տյու կասիս, թե ուսկոներս բիթուն կոտոտվան, քյո ոեքիմներ զիկ չեն կանա ժրցուցե, տյու պիտի էն բաշ գյնն մորթես, որ ես ուտեմ՝ ժրեմ. թե չէ՝ կմեռնեմ: Որ էն գյնոն էլ մորթես բիթյուն բնն օրթալաղից կսերսփվի, ըստրիս տյու քյո քյեֆն իրիշկա, էլ մնոնխ մ՝ան:

Թակավորու խարս ի, խալայեղներն են կտիսնան, որ թակավորու խարսի խնսիմնթ բիթուն-բիթուն փոխվեր ի, քիթ-մոութ զաթի ըսկուն զյառշելի, որ մարթ չուզե իրիշկա իրես, ինոնքյ-ինոնքյ կմեզեն. կզարմանան, ամաև ոնխու ծեն չեն կանա խանե:

Թակավորու լաճն ի, կտիսնա, որ ինն՝ ուր կնգյանն նոնճվա խորոտկութեն ի

մնացե. նմ՛ էլ ամանվա խասիմթ. ամաև զինքյ ուր կմեզի, կասի՝ ավատա տոլով ի, իտոր խամար ըսըսկնմ իլեր ի:

Ավուր մեկ թակավորու խարսև ի, գյմղտիկ քիչմ չոր խաց կլցի ուր դեռշկի տակ, թակավորու լաճուն կկանչի, խետ որ թակավորու լաճ կմտնի ներս, ինքյ մախսուս կշոճվի վեր էն կողին, կշոճվի վեր էն կողին, խացեր կկոտոտվեն. ծեն կխանեն:

Թակավորու լաճն ի, որ էսա ծեն կլսի, կզմրմանա, կասի. - Ախչի՛կ, ի՞նչ էլերի քյե:

Խարսև ի, տհտքյալեն կասի. - Քյամբախ անեմ քյո հեքիմներաց տուն, ինոնքյ իմ տուն ավիրեցին, ինոնքյ չեն կանա զիկ ժրցուցե: Իմ ղեղ-դմրման մեչ էրազին մեյ խատ սիվդակ մուրուս խմլիվորմ զիկ ասաց՝ պիտի էն բմշ գյաո մորթես, որ ես ուտեմ. ժրիմ, թե՝ չը, ճար չկա՝ ես կմեռնեմ:

Թակավորու լաճն ի, որ էսա խմբմր կլսի, շատ կզմրմանա, կասի. - Ախչի՛, ի՞նչխ էն գյմռ մորթեմ ուտես, չէ՞ որ տյու կասիր. թե էն իմ ախպերն ի, տուսցավ գյաո. էլ քյոր ախպոր միս ի՞նչխ կուտի:

Խարսև ի, կասի. - Մադմմ, որ ես կմեռնեմ. էլ ի՞նչ անեմ ախպեր: Մարթու ջան որ կա՝ քյմնց խեր-մեր, քյհր-ախպեր դահիս անուշ ի: Ես մեռնելուց սորա, թող էն մեռնի, քյմնի որ էլեր ի գյաո. էլ չի կանա էլնե մարթ:

Թակավորու լաճն ի, որ էսա պմն կլսի, ուր գյլխու մազեր կդիզնա. համան կթողնի կէլնի տյուս:

Էնգյախ. որ խորթ մեր թակավորու խարսին կմլշկի մեչ ծովուն, աստծու խրամանքյով մեյ խատ կեդ ծյուկ էսա ախչկան կուլ կուտա:

Ախչիկն ի, մեչ էսա ծկան փուրին ութ օրից սորա, կծնի, մեյ խատ խուռնի-խրեղեն լաճ տղեմ կպերի:

Ավուր մեկ էսա քյաղքյի ժմմխար կոչնակ կառնի կլկցուցալեն կինի քյաղքյի փողհտեր կֆռա. էդա քյաղքյի քյմնիմ տներն էլ ծովու քյմնմրն ի ըսկուն, որ խետ որ ժմմխար էդա ծովու քյմնմր կոչնակ կզմրկի. ախչիկ ծովու մեչեն էսա կոչնակի ծեն կլսի կբոռա կասի.

- Ժմմխա՛ր, որ ժմմ կծեմեն.
Առճի խաչ քյո երես կխանեն.
Խմբմր տանես Երեմեա թակավորին.
Կասաբի թևիկ թյհլնմ.
Տմնկի պերան իտև դառնա.
Որ իմ Գյմռնիկ ախպեր չի զինա:

Ժմմխարն ի, որ ծովու օրթալաղից էսա ծեն կլսի, մեյ խատ ուր իրես խաչ կխանի, կթողնի կէրթմ:

Էն մեկէլ օր ժմմխար որ կուգյմ էդա տեղեր կոչնակ կզմրկի, գյինա ծովու մեչից էտա ծեն կլսի: Վարհատի, որ իրեքյ դիր էսա ծեն կլսի, ինքն ուր կասի. - Եսա իրեքյ դիր էլավ, որ զիկ կուտան աստծու սեր, վալա կուզի ինչ որ էլնի, ես պիտի էրթամ Երեմեա թակավորին դողրին ասեմ բմլքյի ստեղ պմմ կա:

Ժմմխարն ի, առատուն, որ ժամ կացեկվի, դողրի կէրթմ, կմտնի թակավորու սարեն, կէլնի թակավորու առճև, կասի. - Թակավոր ապրած կենաս, էսա իրեքյ օր ի, որ ես կէրթմմ ծովու քյմնմր, կոչնակ կզմրկեմ, ծովու մեչեն, էլ չեմ կիտե իսան ի, ի՞նչխ ծովու մեչեն մեյ խատ անուշ ծենով կբոռան, կասեն.

Ժմմխա՛ր, որ ժմմ կծեմեն.

Առճի խուչ քյո երես կխանես.
Խաբար տանես Եբեմեա թակավորին.
Կասաբի թևիկ թյուկնն.
Տանկի պերան իտև դառնա.
Որ իմ Գյանոնիկ ախպեր չի զինա:

Թակավորու լաճն ի, խետ որ էսա կլսի, կենի մեչ մառնախի. ինքն ուր կասի. - Կա. չկա ըստեղ պանմ կա. չէլնի՞ էսա իմ կնիկ չի. որ կասի՝ գյանո մորթեքյ ուտեմ: Կտանոնա ժանմարին կասի. - Եյ ժանմխա՛ր ախպեր. ես քյո խուկին կավատամ. առատուն, որ տյու կէրթաս էն տեղեր կոչնակ զանրկելու, արե զիկ էլ տար, խետ քյե խենքյ էդա ի՞նչ պանն ի:

Ժանմխարն ի. առատուն շիտ ժանմ զանրկոց կուգյան թակավորուն ծեն կուտա. կառնի խետ ուր կէրթան ծովու ավ: Խետ որ կբանշլայի կոչնակ զանրկել, ծովի մեչեն գյնա էտա ծեն կբոռա:

Թակավորու լաճն ի, խետ որ էսա ծեն կլսի. կնառնանանա ծովու քյանար, կբոռա. - Է՛յ, խողացի՞ն ես, խրեղե՞ն ես, ի՞նչ ես, արե տյուս, խեքյ ինչ կասես:

Ախչիկն ի, ծովու մեչեն ուր իրկան ծեն որ կլսի. կճանչնա, կասի. - Ի՞նչխ գյանմ տյուս, չլուտ իմ:

Թակավորու լաճն ի, համան ուր ջյուբեն կխանի, կթանի ծովու քյանար. կզատանա, կասի. - Առա՛ քյե խալավ. էլի տյուս. խագյի, արե:

Ախչիկն ի. ծովու մեչեն կբոռա. կասի. - Ախր ես մենակ չեմ, զիկ գյրկանոց էլ կա:

Թակավորու լաճն ի, ուր վզի բոյեն բաշլին կառցկի, կթանի վեր ուր ջյուբին. կասի. - Ես էլ քյո գյրկանոցին:

Աստծու հրամանով կետ ծուկ կմոտանա քյանարին. կփխսի: Ախչիկ, ուր տղեն զիրկ. կէլնի տյուս, կառնի թակավորու ջյուբեն, կփաթթվի մեչ. բոյեն բաշլին էլ կառնի ուր գյրկանոց մեչ, կնառնանա, տեխ թակավորու լաճ:

Թակավորու լաճն. որ էսա կնգյան կտիսնա. որ ի՞նչ գյեռ ուր կնիկն ի. կուրախնա, կփանթթվին մեյ մեկէլու վիզ: Ախչիկն ի, ուր գյլխուց ընցած մեյ մեկ կպատմի էսոր:

Թակավորու լաճն ի, որ էսա պանն կլսի, շատ կպանրկանա, համան տուն խասնելուն պես, մարթ կէօրեռխկի ուր զոքյանչն էլ կպիրի, մեր վ ախչկան անմր կանի՝ կապեն ծիերաց պոչեր, քշեն սար-քար իրիկուն գյլխու կոտ, խետ մազերաց, առնեն պիրեն. տան իրեն: Ժանմխարին էլ բեռլ-բեռլ ոսկի կուտա, նոր ինոնքյ ուրախութեն կանեն, կխասնեն ուրենց մուրազին, տյուք էլ խասնեքյ ծեր մուրազին:

Երկնուց իրեքյ խատ խնձոր իճանվ: Մեկ՝ ասողին. մեկ՝ լսողին, մեկն էլ՝ ականջ արողին: